

ՀՀ բանկային համակարգի 2010-ի երրորդ եռամսյակի գործունեության ամփոփում

Ընթացիկ տարվա երեք եռամսյակների արդյունքները ցույց են տալիս, որ բանկային համակարգը գրեթե հաղթահարել է համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքները և թևակոխել կայուն զարգացման փուլ: Հաշվետու եռամսյակի ընթացքում բանկային համակարգը գործել է բնականոն հունով՝ ապահովելով բոլոր հիմնական ցուցանիշների գծով համեմատական բարձր աճ: Այսպես, նախորդ եռամսյակի համեմատ 6 տոկոսով աճել են ընդհանուր ակտիվները, 7.6 տոկոսով՝ վարկային ներդրումները 18.6 տոկոսով՝ արժեթղթերում ներդրումները, 4.4 տոկոսով՝ ընդհանուր կապիտալը և 11.2 տոկոսով՝ չբաշխված շահույթը: Հաշվետու եռամսյակում բանկային համակարգը գործել է արդյունավետ՝ գործունեության ընթացքում ապահովելով մատուցվող ծառայությունների բարձր որակը:


Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2010-ի երրորդ եռամսյակի ընթացքում աճել են 6.0 %-ով կամ 81.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 1,452.3 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվներն ավելացել էին 10.6 %-ով կամ 12.2 մլրդ դրամով, իսկ այս տարվա երկրորդ եռամսյակում նվազել էին 3.4 %-ով կամ 47.6 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 7.9 %-ով կամ 106.2 մլրդ դրամով:

Վարկային ներդրումներ


Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 7.6 %-ով կամ 64.0 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 18.6 %-ով կամ 16.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 902.9 և 103.3 մլրդ դրամ, ընդ որում՝ այս տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել էին 1.0 %-ով կամ 8.3 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 0.1 %-ով կամ 0.1 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև հավելենք, որ նախորդ տարվա երրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 10.1 %-ով կամ 66.0 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 47.8 %-ով կամ 27.6 մլրդ դրամով: 2010-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 62.2 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 64.1 %-ը կամ 579.0 մլրդ դրամ, և այս ցուցանիշն երրորդ եռամսյակի ընթացքում աճել է 9.4 %-ով կամ 49.9 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 23.4 % կամ 87.7 մլրդ դրամ աճի դիմաց: Շարադրվածին միայն ավելացնենք, որ ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել էին 2.1 %-ով կամ 10.9 մլրդ դրամով:

2010-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2010-ի երրորդ եռամսյակի ընթացքում աճել են 0.2 %-ով կամ 0.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 278.6 մլրդ դրամ, ընդ որում՝ ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 0.7 % կամ 2.0 մլրդ դրամ: Համադրելու համար նաև նշենք, որ անցած տարվա երրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը նվազել էր 22.1 %-ով կամ 65.9 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 30.9. %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 19.2 %-ը կամ 173.3 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 9.9 %-ը կամ 89.5 մլրդ դրամ: Ընդ որում՝ եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալը նվազել է 7.9 %-ով կամ 14.9 մլրդ դրամով, իսկ հիփոթեքային վարկերի ծավալն աճել 3.4 %-ով կամ 2.9 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ նախորդ տարվա նույն


Ժամանակամիջոցում նշված ցուցանիշների համապատասխան նվազումները կազմել էին 3.8 % կամ 7.1 մլրդ դրամ և 1.9 % կամ 1.6 մլրդ դրամ: Ասվածին միայն ավելացնենք, որ այս տարվա երկրորդ եռամսյակում նվազում էր գրանցվել ինչպես սպառողական, այնպես էլ հիփոթեքային վարկերի գծով՝ համապատասխան նվազումները կազմել էին 1.7 % կամ 3.3 մլրդ դրամ և 2.5 % կամ 2.2 մլրդ դրամ:



Պարտավորություններ

2010-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 1,134.6 մլրդ դրամ, որն այս տարվա ինն ամիսների ընթացքում աճել է 25.3 %-ով կամ 201.7 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 6.4 %-ով կամ 68.3 մլրդ դրամով, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում աճել էր 12.5 %-ով կամ 111.1 մլրդ դրամով: Համեմատության համար նաև նշենք, որ այս տարվա երկրորդ եռամսյակում ընդհանուր պարտավորությունները նվազել էին 5.0 %-ով կամ 56.0 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 6.2 %-ով կամ 21.7 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 1.0 %-ով կամ 3.5 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 368.9 և 344.9 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 5.5 % կամ 14.2 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդների նվազումը՝ 7.7 % կամ մոտ 13.0 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ նախորդ եռամսյակում նվազում էր գրանցվել վերոնշյալ բոլոր ցուցանիշների գծով. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) նվազել էին 4.3 %-ով կամ 15.7 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները 5.0 %-ով կամ 13.5 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 12.0 %-ով կամ 47.6 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 9.1 %-ով կամ 16.8 մլրդ դրամով: Համադրելիության համար նշենք, որ նախորդ տարվա երրորդ եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 20.3 %-ով կամ 56.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 18.2 %-ով կամ 37.3 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 9.8 %-ով կամ 26.2 մլրդ դրամով, ընդ որում՝ ժամկետային ավանդներն աճել էին 11.3 %-ով կամ 13.9 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 62.9 %-ը, որը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 2.3 տոկոսային կետով:


Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2010-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)



- Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ
- Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ
- Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ
- Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ

Համակարգում ժամկետային ավանդների
փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ




Ընդ. ժամկ. ավանդների Ֆիզ.անձ. ժամկ.ավանդների Իր. անձ. ժամկ. ավանդների

- 3-տն. 2009թ.
- 4-տն. 2009թ.
- 1-տն. 2010թ.
- 2-տն. 2010թ.
- 3-տն. 2010թ.

Մլրդ դրամ

Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան




Ընդհանուր կապիտալ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 4.4 %-ով կամ 13.4 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 317.7 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է կանոնադրական կապիտալի և չբաշխված շահույթի (եկամուտների պահուստի) ավելացման հաշվին, ընդ որում՝ ընդհանուր կապիտալն երկրորդ եռամսյակում ավելացել է 2.8 %-ով կամ 8.4 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ավելացել էր 4.1 %-ով կամ 10.4 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստի) ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 13.5 %-ով կամ 13.1 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել մոտ 110.2 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 34.7 %-ը, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում վերոնշյալ ցուցանիշը նվազել էր 22.9 %-ով կամ 23.8 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, ընթացիկ տարվա երրորդ եռամսյակում աճել է 4.4 %-ով կամ մոտ 8.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 203.8 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 64.2 %-ը: Հարկ է նշել, որ կանոնադրական կապիտալի աճ էր գրանցվել նաև այս տարվա երկրորդ եռամսյակում և այն կազմել էր 1.3 % կամ 2.4 մլրդ դրամ: Շարադրվածին միայն ավելացնենք, որ հաշվետու եռամսյակում կանոնադրական կապիտալի համալրում կատարվել է երեք բանկի կողմից:

Մլրդ դրամ

Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան



Եկամուտներ և ծախսեր

Ընթացիկ տարվա երրորդ եռամսյակում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 51.4 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 41.1 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա երրորդ եռամսյակի ընդհանուր եկամուտները կազմել էին 46.2 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 43.1 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ այս տարվա երկրորդ եռամսյակում համակարգում ապահովվել էր 0.7 մլրդ դրամի պակաս եկամուտ և 0.3 մլրդ դրամի պակաս ծախս, քան հաշվետու եռամսյակում:


Շահույթ

ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 9.1 մլրդ դրամ մաքուր շահույթ, իսկ ինն ամիսների ընթացքում՝ 24.1 մլրդ դրամ, որը 2009-ի ինն ամիսների ընթացքում ապահոված մաքուր շահույթի ծավալին գերազանցել է մոտ 17.0 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ այս տարվա երկրորդ եռամսյակում համակարգում ապահովվել էր 8.2 մլրդ դրամի մաքուր շահույթ:

Ամփոփ ցուցանիշներ

2010-ի երրորդ եռամսյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 8.33 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 1.75 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության աճ անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն աճել է 5.5 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 1.16 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2010-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,
դրանց աճը/նվազումն երկրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Հ Օ Ն Թ Ե Յ 3 Ի 1.
(ՍԷՄ 1 թ 3 Ս)

Գ/Գ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ/ վնաս	Չբաշ. շահույթ III եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոյ Բանկ	172734.2	0.7	1	94715.9	4.4	134645.0	0.1	1	23905.6	1.4	38089.1	2.9	1	14567.2	0.0	15822.2	945.4
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստ.	127804.5	0.9	3	87769.1	10.2	104840.4	-2.8	3	31301.7	-2.1	22964.1	22.1	5	10439.0	38.1	12212.7	1153.7
3	Արդշինհիմնվեստբանկ	114973.9	3.4	5	61857.6	8.5	87079.2	4.2	6	26921.9	0.5	27894.8	1.0	4	15513.6	0.0	8724.7	169.8
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	108295.7	-0.5	6	74332.1	0.6	80053.0	-2.6	7	23724.1	12.7	28242.7	6.0	3	13906.2	0.0	10574.9	1478.0
5	Կոմվերս Բանկ	79462.4	5.9	8	43991.8	-5.4	64734.2	4.5	8	15260.9	7.8	14728.1	12.3	8	4923.3	279.8	7252.4	434.0
6	Յունիբանկ	108019.1	1.0	7	74785.2	4.1	93311.3	0.7	5	39831.5	-1.0	14707.7	3.3	9	11400.7	0.0	4039.1	652.6
7	Հայէկոնոմբանկ	53718.3	19.1	11	28274.4	10.0	45275.2	23.3	10	6260.4	3.2	8443.1	0.8	15	2333.3	0.0	704.7	71.7
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	152480.3	25.6	2	97917.3	14.6	121273.6	33.2	2	20819.4	13.8	31206.7	2.9	2	25477.3	0.0	5508.7	819.5
9	Ինեկոբանկ	52376.5	11.7	13	34199.2	5.0	40046.8	13.9	12	9776.4	8.9	12329.7	5.3	11	4431.2	88.3	5061.5	564.1
10	Հայքիզնեսբանկ	117547.3	3.8	4	76591.4	-1.2	99754.6	4.0	4	24425.8	19.5	17792.5	2.3	6	13450.0	0.0	4243.8	703.2
11	Անեյիթ Բանկ	52685.0	4.3	12	27289.0	4.1	37093.2	5.7	13	9731.7	13.9	15591.4	1.3	7	14300.0	0.0	1428.1	191.1
12	Առեկսիմբանկ	56332.5	14.5	9	43154.8	28.1	41687.7	19.3	11	8826.3	-0.4	14644.8	2.6	10	12347.3	0.0	1968.5	377.4
13	Արցախբանկ	54533.2	9.3	10	33387.4	1.5	45842.2	10.3	9	5873.5	6.8	8691.0	4.4	14	6561.2	0.0	1451.9	363.4
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	42199.6	-1.1	14	25564.3	14.8	32294.3	-2.6	14	6941.9	9.3	9905.3	4.0	13	7148.0	0.0	2417.1	359.3
15	Արմսվիսբանկ	32688.2	2.9	15	13486.1	8.2	24245.9	3.1	15	2436.9	-1.1	8442.3	2.2	16	7002.0	0.0	1213.1	29.2
16	Զարգ. Հայկական Բանկ	21802.7	-3.2	19	14733.6	5.2	14990.3	-6.1	19	6628.9	10.8	6812.4	3.7	19	4556.7	0.0	1855.5	269.8
17	Պրոմբեյ Բանկ	25691.2	5.8	17	16886.1	5.7	15437.1	7.7	17	1551.4	1.4	10254.1	2.9	12	7200.0	0.0	3002.9	293.2
19	Բիբլոս Բանկ Հայաստան	22094.2	-13.6	18	18539.7	-0.6	13673.1	-20.4	20	2732.8	13.8	8421.1	0.5	17	8382.2	0.0	41.6	71.7
20	ԲՏԱ Բանկ	7925.2	-1.1	21	4041.9	0.4	2744.8	-0.6	21	961.2	38.6	5180.3	-1.3	21	6520.0	0.0	-1363.0	-80.1
21	ՊրոԿրեդիտ Բանկ	20886.4	7.5	20	16091.5	9.4	15185.6	10.9	18	2825.1	6.2	5700.8	-0.6	20	6490.0	0.0	-789.2	-34.0
22	Սելլաթ Բանկ	28035.6	41.1	16	15290.6	398.8	20408.5	62.7	16	11.7	0.9	7627.1	4.1	18	6850.0	0.0	702.2	300.3
	Ընդամենը	1452286.0	6.0		902899.0	7.6	1134616.0	6.4		270749.1	5.5	317669.1	4.4		203799.2	4.4	86073.4	9133.3